ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿԱՅԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2019թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հետազոտության նպատակն է Հայկական ատոմային էլեկտրոկայանի (այսուհետ ՀԱԷԿ) 5-10 կմ շառավղով ազդեցության գոտու համայնքերում

1. Պարզել՝

- ռադիացիոն վտանգներին տվյալ համայնքի բնակիչների դիմակայելու պատրաստվածության մակարդակը
- տվյալ համայնքում տարերային աղետների, ռազմական իրավիճակների, ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության համար նախատեսված թաքստոցների և ապաստարանների, այդ թվում հակաճառագայթային թաքստոցների առկայությունը, ինչպես նաև դրանց համապատասխանության ֆունկցիոնալ աստիճանը
- առաջին անհատական պաշտպանական պարագաների առկայությունը տվյալ համայնքում
- տվյալ համայնքում մթնոլորտային օդի, ջրի և հողի աղտոտման մշտադիտարկման գործընթացների իրականացումը և արդյունքների վերաբերյալ բնակչության տեղեկատվածության աստիճանը
- բնակչության սոցիալական պաշտպանվածության, ինչպես նաև պետության ու ՀԱԷԿ-ի կողմից ստացվող սոցիալական օժանդակության մակարդակը
- ՀԱԷԿ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում տեղի բնակչության ներգրավվածության աստիճանը
- ՀԱԷԿ-ի զարգացման ծրագրերով համայնքներին ցուցաբերվող աջակցության ցուցանիշները։

2. ՀԱԷԿ-ի ազդեցության գոտու բնակիչներին ծանոթացնել՝

- ճառագայթային և էկոլոգիական անվտանգությանը ներկայացվող պահանջներին
- ատոմային էներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության նոր քաղաքականության հիմնական որոշումներին և զարգացման հեռանկարներին
- ոլորտում ազդակիր բնակչության կարծիքներն ու առաջարկները ներկայացնելու մեխանիզմներին։

Հետազոտությունն իրականացվել է 2018-2019թթ.։ Հետազոտությունը կատարվել է «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության թիմի և ներգավված կամավորների կողմից՝ «Հանուն Հարավային Կովկասում էներգետիկ պարադիգմի փոփոխությունների» ծրագրի շրջանակներում, դոնոր՝ Brot für die Welt Protestant

Development Service, sub grant - Green Alternative (Վրաստան):

Կազմված հարցաթերթիկի (16 հարց) լրացման միջոցով սոցիալական հարցախույզի է ենթարկվել 67 տեղացի բնակիչ և 12 տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար, վերցվել են ոլորտի վերաբերյալ հարցազրույցներ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից և համայնքի բնակիչներից:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. ՀԱԷԿ-Ի ՄԱՍԻՆ

Հայկական ԱԷԿ-ի հրապարակը գտնվում է Արարատյան դաշտի արևմտյան մասում՝ Արմավիր շրջկենտրոնից 10 կմ դեպի հյուսիս-արևելք, Երևանից 28 կմ դեպի արևմուտք, Թուրքիայի սահմանից 16 կմ հեռավորության վրա: ՀԱԷԿ-ը բաղկացած է երկու էներգաբլոկներից՝ ՋՋԷՌ-440 տիպի (B-270 մոդելի) ռեակտորներով: ՀԱԷԿ-ի առաջին էներգաբլոկն արդյունաբերական շահագործման հանձնվեց 1976թ-ին, իսկ երկրորդը՝ 1980թ-ին: Էներգաբլոկների դրվածքային հզորությունը կազմում է 407,5ՄՎտ, շահագործման նախագծային ժամկետը՝ 30 տարի: ԽՍՀՄ մինիստրների խորհրդի որոշմամբ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո՝ 1989թ. փետրվարին և մարտին, կանգնեցվեցին №1 և №2 էներգաբլոկները: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող քաղաքական կատակլիզմները 1990-1993թթ. հանգեցրեցին Հայաստանի շրջափակմանը և որպես դրա հետևանք՝ հանրապետության ծանր էներգետիկ ճգնաժամի: Ստեղծված իրավիճակով էր պայմանավորված միակ ընդունելի որոշումը՝ վերսկսել Հայկական ԱԷԿ-ի աշխատանքը:

1993թ. Հայաստանի կառավարությունն ընդունեց ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործումը վերսկսելու վերաբերյալ որոշում: Նորոգման ու վերականգնման աշխատանքները և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներն իրականացնելուց հետո 1995թ. նոյեմբերին №2 էներգաբլոկը միացվեց էներգահամակարգին: №1 էներգաբլոկը գտնվում է երկարատև կանգի ռեժիմում: Էներգաբլոկի վերագործարկում չի նախատեսվում: Հայկական ԱԷԿ-ի մասնաբաժինը հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության մեջ կազմում է մոտ 35-38%:

ՀՀ կառավարությունը 2012թ. ապրիլի 19-ին ընդունել է ՀԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը երկարացնելու մասին N 461- Ն որոշումը:

Միջուկային ռեակտորի հովացման համար ՀԱԷԿ-ն օգտագործում է Սևջուր գետի և Արարատյան ստորգետնյա հորերի արտեզյան ջրերը: Սևջուր գետի հոսքը վերջին

շրջանում խիստ նվազել է՝ կապված Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային աղբյուրների գերշահագործման հետ: 1983 թ-ին Սևջուր գետի հոսքը (Սևջուր-Ակնալիճ աղբյուրների միջին ծավալից առաջացած) գնահատվում էր 17.8 խմ/վրկ: 2013թ-ին այն կազմել է ընդամենը 3 խմ/վրկ, 2018թ-ին՝ 0,5 խմ/վրկ: Մինչդեռ ատոմային էլեկտրակայանի գործող էներգաբլոկի միջուկային ռեակտորի սառեցման համար պահանջվում է 1 խմ/վրկ ջուր: Նոր էներգաբլոկի կառուցման դեպքում կպահանջվի երկու անգամ ավելի շատ ջուր: ՀԱԷԿ-ի ջրի կարիքները բավարարելու նպատակով 2013 թվականին հորատվել է 3 հորատանցք: Նախատեսվող մյուս հորատանցքերի փորումը ընթացքի մեջ է, սակայն ասել, որ դա կլուծի խնդիրը, միանշանակ չէ, քանի որ շարունակում են իջնել այդ հորերի սնման աղբյուրներ հանդիսացող ստորերկրյա ջրերի հորիզոնները:

Խորհրդային տարիներին աշխատած միջուկային վառելիքը փոխադրվում էր Ռուսաստան երկաթուղու միջոցով հատուկ նախատեսված և կահավորված վագոնով: Հայաստանում երկաթուղիների շրջափակումից հետո աշխատած միջուկային վառելիքի փոխադրումը Ռուսաստան դադարեց:

Ներկայումս աշխատած միջուկային վառելիքը և ռադիոակտիվ թափոնները ժամանակավորապես պահվում են ՀԱԷԿ-ի տարածքում: Այդ օբյեկտների տարողունակությունը սահմանափակ է: ՀԱԷԿ-ի աշխատած միջուկային վառելիքը Հայաստանից ՌԴ տեղափոխելու հարցը Հանրապետությունում օրակարգային է: Նախատեսվում է աշխատած միջուկային վառելիքի՝ Ռուսաստանի Դաշնություն արտահանման և հետագա վերամշակման պիլոտային ծրագիր: Ծրագրի իրականացման նպատակով ստեղծվել է հայ-ռուսական համատեղ աշխատանքային խումբ՝ տեխնիկատնտեսական և տրանսպորտատեխնոլոգիական սխեմայի ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Բնապահպանության ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ղեկավարությունը հայտարարագրել է հետևյալ սկզբունքները.

- շրջակա միջավայրի օբյեկտների կենսաբանական, հիդրոքիմիական, հիդրոերկրաբանական վիճակի, ճառագայթումային ֆոնի հսկման կազմակերպման միջոցով ՀԱԷԿ հարակից տարածքների էկոլոգիական հսկողության անցկացում

- բնակչությանը ՀԱԷԿ-ի հարթակի և հարակից տարածքների շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ բաց, ստույգ տեղեկության տրամադրում:

1.2. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ատոմակայանի անվտանգ շահագործման ռիսկերի թվում իր մեծ տեղն ունի ՀԱԷԿ-ի անվտանգության գոտու խիտ բնակեցվածությունը: Առաջնահերթ է բնակիչների անվտանգության ապահովումը: Միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության անվտանգության կազմակերպումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ՝ «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում միջուկային և ճառագայթային վթարների հակազդման պատասխանատվության մասին» N 1953-Ն, 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշումներով: Կառավարության վերոհիշյալ որոշումներով հաստատվել են Հայկական ատոմային էլեկտրակայանի 30 կիլոմետրանոց գոտում բնակվող բնակչության հակաճառագայթային թաքստոցներում պատսպարման համալիր միջոցառումները և պատսպարման կարգը:

ՀՀ օրենսդրությամբ վտանգի մասին բնակչության ազդարարման, տարահանման ու տեղաբաշխման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման նախապատրաստական և հիմնական միջոցառումների իրականացման լիազորությունները վերապահված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին: Այս համակարգի հիմնական դերակատարն է Արտակարգ իրավիճակների նախարարությունը:

ՀԱԷԿ-ի ազդեցության գոտին սահմանված է ՀԱԷԿ-ի միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանով, որը հաստատված է ՀՀ կառավարության կողմից 2005 թ-ի դեկտեմբերի 22-ին ընդունված «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N 2328-Ն որոշմամբ: Պլանի համաձայն՝ նախահարձակ անվտանգության ապահովմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ նախատեսված են ՀԱԷԿ-ից 5 կմ շառավղով: Իսկ շտապ միջոցառումների պլանավորման գոտին նախատեսված է ՀԱԷԿ-ից 5-10 կմ շառավղով: Նշված չափանիշներով ազդեցության գոտում ներառված է 25 համայնք:

Որոշմամբ սահմանվել են նաև պետական կառավարման մարմինների գործողությունները, բնակչությանը կայուն յոդի պատրաստուկների և անհատական

պաշտպանության միջոցների բաշխման կարգերը, ինչպես նաև վթարների դեպքում բնակչության պատսպարման վայրերը:

ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2005թ. N 2328-Ն որոշման[1] Հավելված 1-ի համաձայն.

- Վահանաձև գեղձի արգելափակման համար նախատեսված կայուն յոդի պատրաստուկների անհրաժեշտ քանակությունը տրվում է *նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (*ՀԱԷԿ-ին հարակից 5 կմ շառավղով տարածք *այսուհետ՝ ՆՊՄԻ գոտի*) և *շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (*ՀԱԷԿ-ին հարակից 5-10 կմ շառավղով *(այսուհետ՝ ՇՊՄՊ գոտի)* գոտիների համայնքների բնակչությանը և պահպանվում նրանց մոտ, ինչպես նաև՝ կազմակերպության ղեկավարներին՝ ըստ աշխատողների թվի (կետ 8):
- Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքերի բնակչությանը բաշխվում են նախօրոք և պահպանվում նրանց մոտ, ինչպես նաև տրվում են կազմակերպության ղեկավարներին՝ ըստ աշխատողների թվի (կետ 9):
- Վթարային արձագանքող ստորաբաժանումները նախապես ապահովվում են կայուն յոդի պատրաստուկներով, անհատական պաշտպանական միջոցներով, անհատական դոզիմետրերով, ռադիոմետրիկ սարքավորումներով՝ մոնիթորինգ անցկացնելու համար, և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ անցնում են ուսուցում (կետ 10):
- Բնակչության պատսպարման համար ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում օգտագործվում են ապաստարաններ, թաքստոցներ և պարզագույն պաշտպանական կառույցներ, ինչպես նաև մարդկանց տներն ու բնակարանները, բնակելի շենքերի առաջին և նկուղային հարկերը, որոնք պետք է նախօրոք և վտանգի առաջացման դեպքում անմիջապես հարմարեցվեն այդ նպատակին (կետ 10):

ՀՀ ներկա կառավարությունը, վերլուծելով գործող իրավական ակտերի՝ ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշումների կատարողականի ցածր ցուցանիշները, իր 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում ներառել է ոլորտում տիրող իրավիճակի շտկմանն ուղղված գործողություններ և նախատեսում է իրականացնել

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=22060)

պաշտպանական կառույցների ֆոնդի կուտակում, գոյություն ունեցող կառույցների պահպանում, նախապատրաստում և արդիականացում:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16–ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման հավելված 1-ի 84-րդ կետով նախատեսվում է «Բնակչության պաշտպանության ոլորտի կատարելագործում» միջոցառումը, և հանձնարարված է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակը մշակել «Բնակչության պատսպարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և այն ներկայացնել վարչապետի աշխատակազմ: Նույն որոշման Հավելված 2-ով տրված է ոլորտի ներկա գնահատականը. «Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո բաց է մնացել քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների՝ մասնավորապես ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների իրավական կարգավիճակի հստակեցման հարցը, որի արդյունքում բազմաթիվ պաշտպանական կառույցներ օտարվել են, փոխվել է դրանց օգտագործման նպատակային նշանակությունը, և ներկայում անհրաժեշտ է իրականացնել պաշտպանական կառույցների նախապատրաստում, կահավորում, պահպանում, բարեկարգում և դրանց արդիականացում: Անհրաժեշտության դեպքում բնակչության պատսպարումը հիմնականում նախատեսված է իրականացնել բնակելի շենքերի նկուղային հարկերում, որոնք ներկայում մեծամասամբ զբաղեցված են բնակիչների կողմից և օգտագործվում են որպես խորդանոցներ»:

1.3. ՀԱԷԿ-Ի ՀԱՐԱԿԻՑ՝ 5-10 ԿՄ ՇԱՌԱՎՂՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության N 2328-Ն որոշմամբ ՀԱԷԿ-ի ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ընդգրկված է 95771 բնակչությամբ 25 համայնք՝ ՀՀ Արմավիրի մարզից 22 և Արագածոտնի մարզից՝ 3 համայնք:

Համայնքերը և բնակչության թվաքանակը 2008թ. հունվարի մեկի դրությամբ հետևյալն են՝

Արմավիրի մարզում՝ ք.Արմավիր - 32500, ք.Մեծամոր - 10200, գ.Արշալույս - 4362, գ.Ակնալիճ - 3273, գ.Մայիսյան -1819, գ.Ֆերիկ - 257, գ.Առատաշեն – 2996, գ. Աղավնատուն - 3450, գ.Արագած- 3274, գ.Արտաշար - 1430, գ.Արևիկ - 2667, գ. Եղեգնուտ - 1853, գ.Զարթոնք - 2253, գ.Խորոնք – 2735, գ. Ծաղկալանջ - 1396, գ.Ծիածան – 1232, գ.Հայթաղ - 2968, գ.Հովտամեջ - 1351, գ.Մրգաշատ – 6339, գ.Նորավան - 1150, գ. Գեղակերտ – 3143, գ.Տարոնիկ - 2086:

Արագածոտնի մարզում՝ գ. Արագածոտն - 1109, գ. Նոր Ամանոս – 806, գ. Նոր Եդեսիա – 1122։

ՀԱԷԿ-ին վերաբերող կառավարության վերոնշյալ որոշումներում, սակայն, այդ համայնքերը չեն նշվում որպես «ազդակիր»: Դա նշանակում է, որ իրավական առումով սահմանված չէ դրանց կարգավիճակը, հետևապես տեղի բնակչությունը չի կարող դատական կարգով վիճարկել որևէ որոշում: ՀԱԷԿ-ն ընդգրկված չէ նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» օրենքով ամրագրված կազմակերպությունների ցանկում, հետևապես համայնքները բնապահպանական և սոցիալական ծրագրերի իրագործման համար չեն կարող օգտվել այդ օրենքով նախատեսվող մասնահանումներից։ Այդ գումարի տարեկան չափը ՀԱԷԿ-ի համար կազմում է 2,22 մլն. դրամ։

Նշված համայնքները հիմնականում գտնվում են Արարատյան դաշտում, և դրանք՝ բոլորն, ունեն գյուղատնտեսական ուղղվածություն։

Գյուղական համայնքերում տարիներ շարունակ արտադրվել են խաղող, ծիրան, դեղձ, սալոր, բանջար-բոստանային կուլտուրաներ, ինչը հանդիսացել է հումք նախկին պահածոների մի քանի գործարանների համար։ Ներկայումս դրանք չկան, կան գյուղատնտեսությամբ զբաղվող մանր ու միջին տնտեսություններ, գյուղմթերքներ վերամշակող մի շարք փոքր հզորությամբ գործարաններ։

Վերջին տարիներին Արմավիրի մարզում ձկնային տնտեսություններն ունեն նվազման միտումներ՝ կապված Արարատյան ստորգետնյա ջրերի մակարդակի նվազման հետ։ Ստորերկրյա ջրերի հորիզոնների իջնելու հետևանքով Արմավիրի մարզում փակվել է մոտ 40 ձկնային տնտեսություն։ Մարզում ջրային հորիզոնների իջեցման արդյունքում նախկին ինքնաշատրվանող 136 հորերից ներկայումս ջրօգտագործողները ջրառն իրականացնում են պոմպերով՝ դրա համար կատարելով հավելյալ էներգետիկ ծախսեր։ Վերջին տարիներին բարձրացել է ջրային ռեսուրսների հանքայնության աստիճանը՝ իջեցնելով հողերի բերքատվության մակարդակը։ Առաջացել է գյուղատնտեսական հողերի աղակալում և անապատացում։ Ծագել են նշանակալի մարտահրավերներ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման ոլորտում։ Այս ամենի հետևանքով տարածաշրջանում առաջացել են սոցիալական լուրջ լարվածություն, խոցելի խմբեր և պետության ու ՀԱԷԿ-ի կողմից օժանդակության ակնկալիքներ։

ԳԼՈՒԽ 2. «ԷԿՈԼՈՒՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱԷԿ-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ 12 ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

2018-2019թթ. ժամանակահատվածում ուսմնասիություններ են կատարվել 12՝ Արմավիր և Մեծամոր քաղաքային, Արշալույս, Ակնալիճ, Առատաշեն, Արտաշար, Եղեգնուտ, Զարթոնք, Հովտամեջ, Մայիսյան, Մրգաշատ և Տարոնիկ գյուղական համայնքներում: Հանդիպումների ընթացքում մասնակիցներին բաժանվել են «Ինչպես պաշտպանել ինքներդ ձեզ միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում» տեղեկատվական թերթիկներ: Հարցախույզի ընթացքում տեղեկատվական թերթիկներ փակցվել են նաև համայնքների հանրային վայրերում:

Տեղեկատվական թերթիկ

ԵՂԻՐ ԻՐԱՋԵԿ, ՈՐ ՊԱՇՏՊԱՆԵՍ ՔԵԶ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎՏԱՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ

Եթե կլսեք «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Ճառագայթային վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին» չընդհատվող ազդանշանը, ապա

- Մ՛ի մատնվեք խուճապի
- Եթե ունեք զտող հակագազ, ապա հագե՛ք այն, իսկ եթե չունեք, հագե՛ք շնչադիմակ կամ ձեռքի տակ եղած միջոցներով (խոնավեցրած) փակե՛ք շնչուղիները
- Հակագազով կամ շնչադիմակով ապահովե՛ք առաջին հերթին ՁԵԶ, ապա՝ երեխաներին
- Վերցրե՛ք Ձեզ հետ առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձը հաստատող փաստաթղթերը
- Վերցրե՛ք Ձեզ հետ ամենաքիչը 2 օրվա համար անհրաժեշտ ջուր, սննդամթերք, իրեր
- Արագ պատսպարվե՛ք մոտակա թաքստոցում, կամ որևէ փակ շինությունում
- Պատսպարման վայրերից դու՛րս եկեք միայն հեռուստատեսության, ռադիոյի և շարժական բարձրախոս սարքավորումների միջոցով այդ մասին իրազեկվելուց հետո
- Հետագա գործողություններն իրականացրե՛ք ըստ համայնքի (գյուղապետարանի) փրկարարական շտաբի հրահանգների:

Եթե չեք հասցրել պատսպարվել թաքստոցում և մնացել եք տանը կամ աշխատավայրում, ապա՝

- Շտապ իրականացրեք տարածքի հերմետիկացման աշխատանքներ՝ ծածկեք դռներն ու պատուհանները և փակեք առկա ճեղքերը՝ օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցները
- Բարձրահարկ շենքերում գտնվելիս՝ շտապ իջեք վերին հարկերից և տեղ զբաղեցրեք նկուղային տարածքներում կամ դրանց բացակայության դեպքում՝ շենքի առաջին հարկերում

Փողոցում և բաց տարածքներում գտնվելիս՝

- Թաքնվե՛ք մոտակա ապաստարանում կամ ճանապարհամերձ առվակների, հեղեղատարների համար նախատեսված կառույցներում, տարբեր տեսակի փոսորակներում, թմբապատնեշների և ոչ բարձր պատնեշների (պատերի) հետևում:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Բջջ.՝(+37491) 92 12 64
Էլ. հասցե.՝ ecolurpressclub@gmail.com
Էլ. կայք՝ www.ecolur.org
Ֆեյսբուքյան էջ՝https://www.facebook.com/Ecolurorg-181097155276008/?ref=bookmarks

ԷԿՈԼՈՒՐ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆԵՐԴԱՇՆԱԿ

2.1. Մայիսյան համայնք

ՀԱԷԿ-ը գտնվում է Մայիսյան համայնքի վարչական տարածքում: Համայնքը հիմնադրվել է 1932 թվականին: Համայնքի մակերեսը 1989 հա է, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1275,9 հա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ և անասնապահությամբ:

Մայիսյանն ունի 2030 բնակիչ, որից 15-ն են աշխատում ՀԱԷԿ-ում: Ջեռուցման նպատակով օգտագործում են գազ, փայտ և աթար, երբեմն՝ էլեկտրաէներգիա: Ըստ հարցումների՝ գազի, էլեկտրաէներգիայի համար ձմռանը յուրաքանչյուր տնտեսություն վճարում է 25.000-30.000 դրամ, փայտ էլ սեզոնին օգտագործում են 5-7 խմ ծավալով:

Մայիսյան համայնքը, որի վարչական տարածքում է գտնվում ատոմակայանը, չունի արտակարգ իրավիճակներում պատսպարվելու համապատասխան կահավորմամբ ապաստարաններ: Բնակիչները կարծում են, որ արտակարգ իրավիճակների դեպքում պետք է թաքնվեն նկուղներում:

Նկ. 1 «Նկուղ-ապաստարան» Մայիսյանում

Համայնքում առկա է բժշկական ամբուլատորիա: «Ոչինչ չունենք, ոչ հակագազեր, ոչ այլ պաշտպանիչ միջոցներ, միայն յոդ են տալիս»,- ասաց համայնքապետը:

Բնակչության համար միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ չկան, տեսանելի վայրերում բացակայում են տարահանման պլանները: Բնակիչների համար չեն կազմակերպվում ուսումնավարժական պարապմունքներ կամ միջոցառումներ: Ուսումնավարժական պարապմունքներ անցկացվում են միայն դպրոցում, եզակի դեպքերում՝ նաև համայնքապետարանին կից գործող արձագանքող վթարային խմբերի անձնակազմի համար: Հարցումներից պարզ դարձավ, որ բնակչության հիմնական մասն իրազեկված չէ միջուկային և ռադիացիոն վտանգի, դրա հետևանքների և իր անհատական պաշտպանական գործողությունների մասին: ԷկոԼուրի հարցին, թե ինչ կանեն, եթե ՀԱԷԿ-ից ստացվի ռադիացիոն վտանգի ազդարարում, գրեթե բոլորը պատասխանեցին. «Անմիջապես տներից դուրս կվազենք դեպի գյուղապետարան»: Համայնքում չեն իրականացվում բնակիչների առողջությանն ուղղված՝ գյուղատնտեսական մթերքների որակի, հողի, օդի, ջրի աղտոտվածության հետազոտություններ: Անդրադառնալով միջուկային անվտանգության ապահովմանը միտված իրավական ակտերի քննարկումներին Մայիսյան համայնքի մասնակցությանը՝ համայնքապետը հայտնեց, որ քննարկումներին համայնքապետարանը պասիվ մասնակցություն է ունենում:

2.2. Արշալույս համայնք

Արշալույսը ՀԱԷԿ-ին ամենամոտ գտնվող համայնքներից է՝ ընդամենը 4 կմ հեռավորություն: Համայնքը տեղակայված է ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Բնակչությունը՝ 3900 մարդ, զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ: Տարածքում զարգացած է խաղողագործությունը:

Կատարված հետազոտության արդյունքում պարզվեց, որ համայնքն արտակարգ իրավիճակների դեպքում ապահովված չէ հատուկ ապաստարաններով և պաշտպանիչ միջոցներով: Ճառագայթային անվտանգության մասին գիտելիքներ ստանում են միայն դպրոցականները՝ «Ռազմագիտություն» առարկայի դասավանդման ժամանակ: «Դպրոցում որպես ապաստարան նախատեսված է մարզադահլիճը:

Նկ. 2 Արշալույս գյուղի դպրոցի մարզադահլիճը

Սակայն, ինչպես ցանկացած դպրոցի մարզադահլիճ, այն չի կարող ապաստարանի դեր կատարել, նախևառաջ մեծ պատուհանների առկայության պատճառով: Ինչպես հայտնի է, միջուկային վթարների համար նախատեսված ապաստարանները պետք է լինեն ոչ ապակեպատ: Բոլոր հարկերի միջանցքներում փակցված է տարահանման պլանը, ռազմագիտության դասարանում՝ միջուկային վթարի դեպքում պաշտպանվելու պաստառ: «Անվտանգության հետ կապված երաշխիքները պետք է կառավարության մակարդակով տրվեն և այն մարդկանց կողմից, որոնք պատասխանատու են և ապահովում են ատոմակայանի անվտանգ աշխատանքը: Լավ կլիներ, որ մենք ոչ թե սեփական պատկերացումներով հավատայինք, որ անվտանգ է, այլ համոզվեինք, առնչություն ունենայինք փաստաթղթերին, - ասաց ռազմագիտության ուսուցիչը և հավելեց, - մեզ քննարկումներին չեն հրավիրում, մենք կցանկանայինք մասնակցել, ներկայացնել մեր խնդիրները՝ սկսած անհատական պաշտպանության միջոցներից, որոնցով պետք է յուրաքանչյուրն ապահովված լիներ»: Արշալույսի բնակիչները քիչ են տեղեկացված ՀԱԷԿ-ին առնչվող հարցերին, միջուկային վտանգի իրազեկվածության մասին իրենց գիտելիքները գնահատում են «բավարար»: Ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի կառուցման մասին բնակիչները տեղյակ չեն:

Համայնքի բուժամբուլատորիան ապահովված չէ ռադիացիոն վտանգների դեպքում նախատեսված առաջին անհրաժեշտության դեղամիջոցներով: «Վերջին 10 տարվա ընթացքում ոչինչ չեն տվել: 10 տարի առաջ գոնե յոդ էին տալիս, հիմա ընդհանրապես ոչինչ չկա ... ՀԱԷԿ-ի անվտանգության հետ կապված որևէ քննարկման չենք մասնակցել, մեզ ոչ մի տեղ քննարկման չեն հրավիրում: Ինչ-որ չափով

տեղեկացված ենք, համայնքապետարանում ժողովների ժամանակ նկարագրել են, թե ինչպես են տարահանելու բնակչությանը: Ասել են՝ պետք է նկուղներում թաքնվեք, առանց պատուհանների նկուղներում չթաքնվեք: Անգամ ասել են՝ որոնք են լավ նկուղները, որ այդտեղ գնանք, թաքնվենք», - ասացին տեղացիները:

Արշալույսցիների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: «Ոռոգման սեզոնին Սևջուր գետից ենք օգտվում, բայց գետում ջուր չկա: Ընդամենը 1 հոր ունենք, որը չի բավարարում ամբողջ համայնքին ... Ջուրն է մեր խնդիրը, ջրի դեֆիցիտն ազդում է մեր եկամտի վրա», - ասացին բնակիչները:

Ջեռուցման նպատակով օգտագործում են գազ, էլեկտրաէներգիա, փայտ և աթար: «Գազը թանկ է, հոսանքը թանկ է, փայտն այս տարի թանկացավ ... Ատոմակայանն անմիջապես մեր կողքին է, կցանկանայինք, որ գոնե էլեկտրաէներգիան մեզ համար էժան հաշվեն», - նշեցին Արշալույսի բնակիչները:

Ձմռանը գազի օգտագործման համար յուրաքանչյուր տնտեսություն ամսական միջինը վճարում է 10.000-25.000 դրամ, նույնը `հոսանքը: Փայտ օգտագործում են 5-7 խմ: Բնակիչների խոսքով՝ 1 խմ-ը գնում են 25.000-27.000 դրամով:

Արշալույսի բնակիչները մտահոգված են իրենց համայնքում արատներով ծնունդների կապակցությամբ. «20-ից ավելի դեպք գիտենք, երբ երեխաները ծնվել են բնական արատներով: Մեզ մոտ ոչ մի հետազոտություն չի անցկացվել՝ դրա պատճառները պարզելու համար: Բայց մենք մտահոգ ենք, որ դա կարող է կապված լինել ատոմակայանի հետ»:

Արշալույսում միջուկային անվտանգության պատասխանատուն դպրոցում տնօրենն է, համայնքում՝ համայնքապետը:

2.3. Մեծամոր քաղաք

Մեծամոր քաղաքը գտնվում է ՀԱԷԿ-ից 6 կմ հեռավորության վրա: Հիմնադրվել է 1969թ-ին՝ որպես ՀԱԷԿ-ի բնակելի ավան, քաղաք՝ 1995թ-ից), գտնվում է Երևան քաղաքից 38 կմ հեռավորության վրա: Բնակչության թիվը կազմել է 9 հազար մարդ /ըստ մարզպետարանի պաշտոնական կայքի՝ 12165/:

Բնակչության կազմը՝ հայեր, ռուսներ, եզդիներ, ասորիներ: Տնային տնտեսությունների թիվը՝ 2700: Ունի դպրոց, մշակույթի տուն, երաժշտական դպրոց: Հողային ֆոնդի մոտ 95%-ն օգտագործվում է որպես համայնքի հողեր, որի մոտ 14%-ը տնամերձ հողերն են: Դրանք բանջարանոցներ և պտղատու, խաղողի այգիներ են: Համայնքի մակերեսը 912 հա է:

Նկ.3 ք. Մեծամորի դպրոց

Մեծամոր քաղաքում բնակչության զգալի մասն աշխատում է ՀԱԷԿ-ում: Համայնքն ունի պոլիկլինիկա և հիվանդանոց: Կա խնդիր խմելու ջրի հետ կապված: Ոռոգման ջուր էլ բավարար քանակությամբ չունեն, համայնքի 600 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողն անջրդի է: Համայնքում կա կոյուղաջրերի հեռացման կենտրոնացված համակարգ, բայց չկան մաքրման կայաններ: Բնակիչների խոսքով, հաճախ տարածվում է գարշահոտություն: Ջեռուցման նպատակով Մեծամորում օգտագործում են էլեկտրաէներգիա, գազ և փայտ: Եթե բնակիչները ձմռանը ջեռուցումն իրականացնում են գազով և էլեկտրական հոսանքով, ապա ամսական 60.000-80.000 դրամի գումար են վճարում, իսկ փայտի ձեռքբերման համար, 100.000-250.000 դրամ:

Քաղաքում վթարային իրավիճակների համար նախատեսված բնակչության տարահանման պլան տեսանելի վայրերում չկա: Միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ, ցուցանակներ ևս առկա չեն: Մեծամորում անցկացված հարցումներից պարզվեց, որ բնակիչները բավարար իրազեկված չեն ՀԱԷԿ-ի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների մասին: Հարցվածները նշեցին, որ Մեծամորում պարբերաբար իրականացվում են անվտանգության ուսումնավարժական պարապմունքներ, սակայն միջուկային անվտանգության վերաբերյալ իրավական ակտերի քննարկումներ համայնքում չեն անցկացվել:

Մեծամորում բնակչության միջուկային անվտանգության պատասխանատուն համայնքի ղեկավարն է:

2.4. Ակնալիճ համայնք

Ակնալիճ համայնքը գտնվում է ՀԱԷԿ-ից 5 կմ հեռավորության վրա:

Գյուղը տեղակայված է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, Արմավիրի մարզի Էջմիածնի շրջանի հյուսիս-արևմուտքում: Տարածությունը 1740 հա է, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից սահմանակից է Ֆերիկ և Արշալույս, հարավից և հարավ-արևելքից Տարոնիկ և Մայիսյան համայնքներին: Գտնվում է 7-9 բալանոց սեյսմիկ շրջանում:

Ակնալճի տարածքում՝ ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա, գտնվում է Այղր լիճը, որը սնվում է ստորերկրյա ջրերից և աղբյուներից:

Նկ.4. Գյուղ Ակնալիճ

Ակնալճի 3500 բնակչից միայն 40-ն են աշխատում ՀԱԷԿ-ում հիմնականում որպես բանվոր: Բնակիչների եկամուտները ձևավորվում են այգեգործությունից, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումից և անասնապահությունից:

Ակնալիճում կա 13 խորքային հոր, որոնցից մեկն օգտագործվում է խմելու, իսկ մյուսները՝ ոռոգման նպատակով: Ոռոգման ջուրը չի բավարարում գյուղի բոլոր մշակովի հողատարածքները ոռոգելու համար: Ակնալճի բնակիչները պաշտպանված չեն ՀԱԷԿ-ի պոտենցիալ ռիսկերից: Համայնքում չկան ապաստարաններ, հատուկ հակաճառագայթային թաքստոց, պաշտպանիչ տեխնիկական միջոցներ, առաջին բուժօգնության անհրաժեշտ պարագաներ ճառագայթային ահազանգերի համար: Գյուղմթերքի անալիզներ չեն անցկացվում:

Ռադիացիոն վտանգի դեպքում բնակիչները պետք է թաքնվեն դպրոցի, մշակույթի տան նկուղներում, որոնք տեխնիկապես կահավորված չեն, իրենցից ներկայացնում են փոքրիկ և խոնավ տարածքներ: Բնակչության ճառագայթային անվտանգության

վերաբերյալ ուղղորդող պաստառներ համայնքում չկան: Ճառագայթային վտանգի դեպքում տարահանման պլանը բնակիչներին հասանելի վայրերում առկա չէ: Հասանելի է դպրոցի տարահանման պլանը: Տարածաշրջանում ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի կառուցման մասին բնակիչները տեղյակ չեն:

Ջեռուցումը բնակիչների համար մեծ ծախս է: Էլեկտրաէներգիայով գրեթե չեն ջեռուցում տները, հիմնականում տաքանում են գազով և փայտով: Գազի սակագինը ստացված եկամուտների համեմատ բարձր է, փայտն էլ տարեցտարի թանկանում է: Գազի համար ձռմանը ամսական վճարում են 20.000, 50.000 և անգամ 80.000 դրամ: Եթե ջեռուցումը փայտով է, սեզոնին անհրաժեշտ է 10-12 խմ:

2.5. Արտաշար համայնք

Արտաշարը ՀԱԷԿ-ից գտնվում է 6-7 կմ հեռավորության վրա, տեղակայված է Միջինարաքսյան հարթավայրում: Համայնքի բնակիչներից ՀԱԷԿ-ում աշխատող չկա: Ունի միջնակարգ դպրոց, բուժօգնության կետ: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Արմավիրի Մայր ջրանցքի և Սև ջուր գետի ջրերով: Ոռոգման համակարգը սպասարկում է «Արմավիր» ՋՕԸ-ն: Պետական և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողահանդակներն օգտագործվում են որպես վարելահողեր:

Կան քիչ տարածությամբ արոտավայրեր և պտղատու այգիներ: Համայնքի մակերեսը կազմում է 7.3 ք/կմ: Բնակչության թիվը՝ 1196, բնակչության կազմը՝ հայ, եզդի, տնային տնտեսությունների թիվը՝ 184: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը 528,39 հա է, որից վարելահողեր՝ 354-հա, այլ հողատեսքեր՝ 144,39 հա, ջրանցքներ՝ 30,0 հա: Վերջին 10-15 տարիներին Արարատյան ավազանի ստորերկրյա ջրերի ձկնաբուծության նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործման հետևանքով համայնքում առաջացել է սակավաջրություն, իջել են խորքային հորերի մակարդակները, ամբողջովին ցամաքել է Սև ջուր գետը, որը համայնքն ապահովում էր ոռոգման ջրով: Մեծամոր, Արմավիր քաղաքների կոյուղաջրերը հոսում են համայնքի ոռոգման համակարգ, և այդ ջրերով ոռոգված մշակովի հողատարածքներից ստացվող բերքը շուկայում դարձել է անմրցունակ:

Գյուղատնտեսությունը հաճախակի տուժում է ուշ գարնան ցրտահարությունից, մայիս-հունիս ամիսներին տեղացող կարկուտից: Համայնքում չկան հատուկ ապաստարաններ: «Հիմնական ապաստարան չունենք: Մեր տարահանման պլաններով արտակարգ իրավիճակների դեպքում որպես ապաստարան ընտրված են բնակելի տների նկուղները, դպրոցի նկուղը», - ասացին բնակիչները: Սակայն կատարված

ուսումնասիրությամբ պարզվեց, որ որևէ նկուղ չի համապատասխանում իր ֆունկցիոնալ նշանակությանը:

Չկա նաև ահազանգերի ընդունման համապատասխան կայան: Համայնքապետը նշեց. «Հաղորդման կայանը Մեծամորում է, այս տարի խորհրդակցության ժամանակ բարձրացրել ենք հարցը, 100 տոկոս կլուծվի»:

Դեղամիջոցներ, որոնք միջուկային վտանգների դեպքում կարող են օգտագործվել առաջին օգնության համար, համայնքի բուժկետին չեն հատկացվում:

Միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ ևս չկան: Տարահանման պլանն առկա է գյուղապետարանի չհրկիզվող պահարանում: Հասանելի են դպրոցի տարահանման պլանները, դրանք փակցված են միջանցքներում:



Նկ .5 Տարահանման պլանն Արտաշարի միջնակարգ դպրոցի պատին

Ուսումնավարժական պարապմունքներ վերջին անգամ անցկացվել են 2017 թ-ին: Համայնքապետը և բնակիչները նշեցին, որ ՀԱԷԿ-ի հետ կապված իրավական ակտերի քննարկումներին չեն մասնակցել:

Միջուկային վտանգի իրազեկվածության մասին իր գիտելիքները համայնքապետը գնահատեց «միջին», իսկ բնակիչներ՝ հիմնականում «բավարար»:

Համայնքի տնտեսությունների 70 տոկոսը ջեռուցման նպատակով օգտագործում է փայտ: Փայտն էլ տարեցտարի թանկանում է, 1 խմ-ն ձեռք են բերում 30.000 դրամով: Ձմռանն օգտագործում են 6-10 խմ:

Համայնքապետը նշեց, որ 2018 թվականին սննդի տեսչությունն անալիզի համար վերցրել է բանջարանոցային կուլտուրաների նմուշներ, սակայն արդյունքների մասին իրենց պաշտոնապես չեն հայտնել:

2.6. Մրգաշատ

Գտնվում է ՀԱԷԿ-ից 6 կմ, մարզկենտրոնից՝ 4 կմ, Երևանից՝ 42 կմ հեռավորության վրա: Տեղակայված է Միջինարաքսյան հարթավայրում: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Արմավիրի Մայր ջրանցքի ջրերով: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը, պտղատու և խաղողի այգիները: Համայնքի հիմնախնդիրների մեջ գլխավորը ոռոգման ջրի հարցն է և ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, դպրոցաշինության հարցը: Վարչական տարածքը՝ 1786 հա է, բնակչության թիվը՝ 6600 մարդ՝ բազմազգ: Տնային տնտեսությունների թիվը՝ 1944: Ունի 2 միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, երաժշտական դպրոց:

Մրգաշատի բնակիչներից 25-ն աշխատում են ՀԱԷԿ-ում: Ըստ համայնքապետի՝ ՀԱԷԿ-ի ազդեցության վերաբերյալ համայնքում ուսումնասիրություններ չեն անցկացվել, անվտանգության ռիսկերի մասին տեղեկատվություն չունեն: «Մի ամիս առաջ Երևանից եկան մի երկու հոգի, ասացին՝ ուզում ենք սարքավորում դնել, նայենք՝ ատոմակայանի ճառագայթումն ինչքան է, բարձրանում է, թե՝ ոչ: Հարցրեցին՝ տեղ կտա՞ք, ասացի՝ որտեղ հարմար է ձեզ, այդտեղ էլ դրեք: Գնացին, էլ չեն եկել: Ճառագայթման վտանգի դեպքում պատսպարվելու ենք բնակիչների, հիվանդանոցի, մանկապարտեզի մշակույթի տան նկուղներում, բայց դրանք ոչ մի բանով հագեցված չեն, միայն մշակույթի տան նկուղում սեղան, աթոռներ կան դրված: Հակագազ էլ չունենք, դեղամիջոց, սնունդ»:

Բնակչության միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ համայնքում չկան: Ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի կառուցման մասին բնակիչներն իրազեկված չէին:

Միջուկային վտանգի դեպքում բնակչության տարահանման պլանը գտնվում էր համայնքապետարանի շենքում, փողոցների ցուցափեղկերում առկա չէ: Հարցին, թե ինչու տեսանելի վայրերում այդ պաստառները չկան, համայքնապետը պատասխանեց. «Մեյֆում է, կպցնեմ պատին, գյուղի կեսը կթողնի, կգնա»: Արտակարգ իրավիճակների դեպքում աշակերտների տարահանման պլան կար գյուղի միջնակարգ դպրոցում:

Նկ.6 Ճառագայթային տագնապի դեպքում որպես ապաստարան նախատեսված Մրգաշատ գյուղի N 1 միջնակարգ դպրոցի սպորտ դահլիճի տեսքը

Համայնքապետի խոսքով՝ ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում գտնվող և գազաֆիկացված Մրգաշատի բնակչության 70 տոկոսը ձմռանը տաքանում է փայտով, որն այս տարի թանկացել է, և 1 խմ-ն արժե 32.000 դրամ: Գազից կարողանում է օգտվել բնակչության միայն 25 տոկոսը: Անցկացված հարցումները ցույց տվեցին, որ ընտանիքները ձմռանն էլեկտրաէներգիայի համար ամսական վճարում են 10.000-25.000 դրամ, օգտագործում են 5-10 խմ փայտ:

2.7. Տարոնիկ համայնք

Տարոնիկը գտնվում է ՀԱԷԿ-ից 6-7 կմ հեռավորության վրա՝ մարզի հյուսիս – արևելյան մասում, ծովի մակերևույթից 845մ բարձրության վրա: Համայնքը գտնվում է մերձարաքսյան գոտում, մարզկենտրոնից 15 կմ հեռավորության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն[2]: Բնակչության թիվը՝ 2278 մարդ, տնային տնտեսությունների թիվը՝ 443: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսություն է: Ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, բուժսպասարկման կետ: Տարոնիկ համայնքի վարչական տարածքը կազմում է 1050,47 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝

[2] http://armavir.mtad.am/VTSS/:

812,96 հա, որից քաղաքացիների սեփականության հողերը՝ 547,93 հա, համայնքային սեփականության հողերը՝ 139,0 հա, չմշակվող հողերը՝ 55 հա, որի պատճառը ոռոգման խնդիրն է: Արոտավայրերը զբաղեցնում են 41 հա:

Տարոնիկ համայնքում կենցաղային նպատակներով ջրհորներից օգտվել հնարավոր է, բայց խմելու համար ջուրը կա՛մ հարևան գյուղերից են բերում, կա՛մ գնում:

Համայնքի տնտեսության զարգացման ճյուղը գյուղատնտեսությունն է: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահող՝ զբաղեցնելով մոտ 231հա:

Նկ. 7 Գյուղ Տարոնիկ

Տարոնիկ համայնքի վարչական տարածքում են գտնվում ՀԱԷԿ-ի «Սև ջուր» ու «Փռուդ» պոմպակայանները, համայնքի տարածքով է անցնում ՀԱԷԿ-ին ջուր մատակարարող 14 կմ երկարությամբ խողովակաշարը, Փռուդ ջրամբարը, որոնք զբաղեցնում են ընդհանուր շուրջ 36 հա տարածք: «Համայնքում գտնվող ՀԱԷԿ-ի շինությունների հարցը իրավաբանորեն կարգավորված չէ: Եթե կարգավորված լիներ, խոշոր հարկ պետք է վճարեր ՀԱԷԿ-ը Տարոնիկում զբաղեցրած տարածքների համար: Որպես փոխհատուցում պարտավորություն է ունեցել համայնքին խմելու ջրով

ապահովել: Սակայն այդ պարտավորությունն իրականացրել է 2005-2006 թթ.: Երբ ջրի հորիզոններն իջել են, այլևս չի ապահովել խմելու ջրով»,- հանդիպման ժամանակ «ԷկոԼուր»-ի թիմին հայտնեց համայնքի ղեկավար Արմեն Խլղաթյանը[3]:

Նկ.8 Տարոնիկ համայնք արտահոսվող կեղտաջրերը

Տարոնիկ համայնքի բնակիչները ճառագայթային վտանգի դեպքում հնարավորություն չունեն պատսպարվելու: ՀԱԷԿ-ի ազդակիր գոտում գտնվող համայնքում առկա չեն նման դեպքերի համար նախատեսված թաքստոցներ: Որպես ապաստարաններ կարող են ծառայել բնակիչների նկուղները, բայց դրանք ոչ բոլորն ունեն: Իսկ առկա նկուղների մակերեսը բավարար չէ համայնքի 2200-ից ավելի բնակչությանը պատսպարելու համար: Այս մասին ԷկոԼուրին հայտնեցին Տարոնիկի բնակիչները: Համայնքում միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ չկան, իսկ միջուկային վտանգի դեպքում բնակչության տարահանման պլանը հասանելի չէ բնակիչների համար: Այն առկա է համայնքապետարանում: ԷկոԼուրին համայնքապետարանից հայտնեցին, որ ԱԻՆ-ի կողմից տրվել է բնակչության տարահանման առաջնահերթության պլան, թե ուր պետք է տարհանել բնակչությանը և

[3] https://www.ecolur.org/hy/news/nuclear-energy/---/11386/

ինչ տրանսպորտային միջոցներով: Համայնքապետարանից ասացին, որ տարհանող մեքենաներն ամրագրված են, գյուղի բեռնատարները՝ հաշվառված:

Տարոնիկ համայնքն ապահովված չէ ճառագայթային վտանգի դեպքում անհրաժեշտ առաջնային օգտագործման պարագաներով՝ չկան դիմակներ, հակագազեր: Համայնքում գործում է բուժկետ, բայց անհրաժեշտ դեղորայքային պարագաները բացակայում են: Համայնքապետարանն իր հերթին երբևէ չի դիմել պատկան մարմիններին բացակայող պարագաների տրամադրման պահանջով: Մինչդեռ այն ամեն տարի մարզպետարանին պետք է ներակայացնի համայնքին անհրաժեշտ պարագաների հայտը:

Այս համայնքում երբևէ ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության ապահովմանը միտված իրավական ակտերի քննարկումներ չեն կազմակերպվել: ԱԻՆ-ը անվտանգության ուսումնավարժական պարապմունքներ վերջին անգամ անց է կացրել 2017 թ.:

«Անվտանգության գործողություններին են ծանոթացրել, օրինակ՝ ազդակի դեպքում ինչ պետք է անի ժողովուրդը»,- նշեց համայնքապետարանի աշխատակիցը: Այս միջոցառումներին բնակիչների մասնակցության ապահովումն իրականացվել է բանավոր՝ հեռախոսով տեղեկացնելու միջոցով: ՀԱԷԿ-ն այս համայնքում երբևէ ճառագայթային մշտադիտարկումներ չի իրականացրել, ստորերկրյա խմելու ջրերի ռադիացիոն մակարդակի ստուգում՝ նույնպես:

2.8. Առատաշեն համայնք

Գտնվում է ՀԱԷԿ-ից ուղիղ գծով 10 կմ հեռավորության վրա, մարզի արևելյան մասում: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 25 կմ, մարզկենտրոնից՝ 24 կմ: Կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ: Հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն: Համայնքի մակերեսը 975հա է: Չի ոռոգվում 50 հեկտարը: Բնակչության թիվը՝ 2820 մարդ, բնակչության կազմը՝ հայեր /94%/, եզդիներ /5.8%/, ռուսներ, ուկրանիացիներ, ասորիներ /0.2%/, տնային տնտեսությունների թիվը՝ 541: Ունի միջնակարգ դպրոց, նախակրթարան, մանկապարտեզ, կուլտուրայի տուն, բուժամբուլատորիա: Համայնքն ունի խմելու և ոռոգման ջրի խնդիր[4]:

«Մենք առաջին զոնայի բնակիչներ ենք, բայց չունենք հատուկ ճառագայթային ապաստարաններ: Արտակարգ իրավիճակների դեպքում նկուղներն են նախատեսված: Իրազեկման պաստառներ համայնքում չկան: Այնպիսի տպավորություն է, որ 100 տոկոսով անվտանգ է և կարիք չկա մեզ որևէ բան ասելու: Ատոմակայանը՝ ինքը, պետք է կազմակերպի, մասնագետներ բերի, դպրոցներից, մանկապարտեզներից սկսած իրազեկի: Բա մարդկանց տարրական գիտելիքներ չտա՞ն: Մեր տարածաշրջանից

[4] http://armavir.mtad.am/files/docs/24269.pdf

շատերը քաղցկեղով հիվանդ են, մարդը մտածում է, որ կարող է դրանից էլ լինի: Ինչո՞ւ այդ մասին չեն խոսում, որ ՀԱԷԿ-ը մեզ արտոնություններ չտա՞: Եթե այդպես է, թող մեզ տանեն՝ այլ գոտում ապրենք, մեզ ու մեր երեխաներին վտանգի չենթարկենք: Ոչ միայն բնակչությանը, նաև տեղական իշխանությանն են անտեսել: Այս զոնայի տեղական իշխանության ներկայացուցիչների հետ մոտեցումն այլ պետք է լիներ», - ասաց Առատաշենի համայնքապետը[5]:

Համայնքից խնդրել են ռադիացիոն ֆոնի մոնիտորինգի համար նախատեսված համակարգի տեղ հատկացնել, սակայն դրան որևէ քայլ չի հետևել: Դպրոցի միջանցքների պատերին ցուցադրված էին տարահանման պլանները: Ըստ դպրոցի ներկայացուցիչի՝ միջուկային վտանգների դեպքում միայն տարահանման պլանները բավարար չեն. «Ամենակարևոր հարցը բունկերների՝ հատուկ թաքստոցների հարցն է, որոնք պետք է լինեն համայնքի դպրոցում, մշակույթի տանը և մանկապարտեզում: Սակայն այդպիսիք չկան»: Առողջապահական հաստատություններից համայնքն ունի բուժամբուլատորիա, որն ապահովված է միայն յոդով: Առաջին անհրաժեշտության պաշտպանիչ միջոցների ձեռքբերման համար համայնքապետարանի կողմից հայտ երբևէ չի ներկայացվել:

Անվտանգության ազդանշանների տեղադրման համար ծախսերը ՀԱԷԿ-ը չի հոգում, այլ թողնում է համայնքի վրա: ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության ապահովմանը միտված իրավական ակտերի քննարկումներին համայնքը չի մասնակցում: Ուսումնավարժական պարապմունքներ վերջին անգամ անցկացվել են 2017 թ-ին: Միջուկային վտանգի իրազեկվածության մասին իրենց գիտելիքները համայնքապետարանի աշխատակիցները, հարցված բնակիչները գնահատեցին «անբավարար»: Համայնքապետի խոսքով՝ ջեռուցման նպատակով բնակչությունը հիմնականում օգտվում է գազից և էլեկտրաէներգիայից: Փայտով ջեռուցվում է տնային տնտեսությունների 10 տոկոսը:

Գազի համար ամսական վճարը միջինում կազմում է 50.000 դրամ, հոսանքի համար՝ 10.000-30.000 դրամ, փայտ՝ միջինը 5 խմ:

2.9. գ. Եղեգնուտ

Եղեգնուտ համայնքը գտվում ՀԱԷԿ-ից 8-9 կմ հեռավորության վրա՝ Արմավիրի մարզի հարավ - արևելյան մասում, ծովի մակարդակից 845 մ բարձրության վրա: Ունի 475 տնտեսություն, 2172 մշտապես ներկա բնակչություն, որից 75%-ը՝ հայեր, 24%-ը՝ եզդիներ, 1%-ը՝ ասորիներ և ռուսներ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 2160,56 հա, որից 1250 հա-ը՝ վարելահող: Շուրջ 5 տարի է՝ համայնքի հողերը ոռոգվում

[5] https://www.ecolur.org/hy/news/nuclear-energy/---/10981/

են 100%-ոց կոյուղաջրերով, որի պատճառով հիվանդանում են բույսերը, կենդանիները և մարդիկ:

Համայնքում չկան հակաճառագայթային թաքստոցներ: Չկան միջուկային վտանգների դեպքում ուղղորդող պաստառներ, միջուկային անվտանգության պլան: Համայնքի բուժկետը, դպրոցն ապահովված չեն ճառագայթային վտանգների դեպքում անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով: Պատսպարվելու միակ վայրը նախատեսված նկուղներն են, որոնք տեխնիկապես կահավորված չեն և չեն կարող ապահովել բնակիչների անվտանգությունը ճառագայթային վտանգներից:

Հարցված բնակիչների 97 %-ը նշել է, որ ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության ապահովմանը միտված իրավական ակտերի քննարկումների մասին իրենց չեն իրազեկում, երբևէ չեն մասնակցել դրանց քննարկումներին: Իսկ միջուկային վտանգի իրազեկվածության մասին իրենց գիտելիքները հիմնականում գնահատել են «բավարար»:

Ոռոգման սեզոնին համայնքը ջրի սակավության խնդիր ունի: Ըստ համայնքապետի՝ Սևջուր գետում ջուր չկա, Սևանից բաց թողնվող ջուրը համայնք չի հասնում: Հողերը ոռոգում են կա՛մ Ախուրյանի ջրամբարից եկող ջրով, կա՛մ խորքային հորերի ջրով: Ունեն 17 խորքային հոր, սակայն ջուրը չի բավականացնում: Նոր խորքային հորերի անհրաժեշտություն կա:

«Որ ջուր չի լինում, ՋՕԸ-ն Զարթոնքի կայանից նասոսով կոյուղաջրերն է մղում», - ասաց համայնքապետը:

Նկ.8 Արմավիր և Մեծամոր քաղաքների կոյուղաջրերը՝ որպես տարածաշրջանի մի քանի համայնքի գյուղատնտեսական հողերի ոռոգման միջոց

Բնակիչները ջեռուցման նպատակով հիմնականում օգտագործում են գազ և փայտ: Տարվա ընթացքում օգտագործված գազի դիմաց վճարը մեկ տնտեսության համար միջինը կազմում է 25.000-45.000 դրամ: Փայտ կարող են օգտագործել մինչև 15 խմ: Այս տարի 1 խմ-ը գնել են 25.000 դրամով: Էլեկտրաէներգիայից օգտվում են կենցաղային նպատակներով, ամսական վճարում են 10.000-20.000 դրամ:

2.10. գ. Զարթոնք

Զարթոնք գյուղը գտնվում է ՀԱԷԿ-ից ուղիղ գծով 9 կմ հեռավորության վրա՝ մարզի հարավ–արևելյան մասում, ծովի մակերևույթից 845,5մ բարձրության վրա, կիսաանապատային գոտի է, գտնվում է Մերձարաքսյան գոտում: Համայնքը մարզկենտրոնից հեռու է 12 կմ, մայրաքաղաքից՝ 45կմ: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն: Վարչական տարածքը կազմում է 1621,26 հա: Համայնքն ունի 2655 բնակիչ, որից 60 %ը հայեր են, 40%-ը՝ եզդիներ: Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը կազմում է 419,8 հա: Համայնքում գործում է 2 ձկնային տնտեսություն՝ «Վանա Տառեխ» ՓԲԸ-ի և «Արմավիր ֆերմեր» ՍՊԸ-ի ձկնաբուծարանները:

Զարթոնքում չկան ապաստարաններ, բնակիչներն ապահովված չեն ռադիացիոն վտանգների դեպքում անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով: «Մի 4 տարի առաջ մարզպետարանում սեմինար անցկացվեց: Մեր բժշկական ամբուլատորիային, որը սպասարկում է 3 համայնք, հատկացվեց յոդ և յոդացված աղ[6]»,- ասաց համայնքապետը:

Նկ.9 ՀԱԷԿ-ը Զարթոնք գյուղից

Համայնքում բնակչությանը միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ չկան: Միջուկային վտանգի դեպքում բնակչության տարահանման պլանն

[6] https://www.ecolur.org/hy/news/water/--/6036

առկա է գյուղապետարանում, սակայն ցուցադրված չէր տեսանելի վայրում: Համայնքի տարածքում այն որևէ տեղ փակցված չէ: Ուսումնավարժական պարապմունքներ բնակիչների համար վերջին անգամ անցկացվել են 2017 թ-ի հուլիսին: Ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի կառուցման մասին բնակիչները տեղյակ չեն:

Զարթոնքի բնակիչների շրջանում անցկացված հարցախույզի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք (համայնքը) ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության ապահովմանը միտված իրավական ակտերի քննարկումներին չեն մասնակցում, սակայն միջուկային վտանգի իրազեկվածության մասին իրենց գիտելիքները բնակիչները գնահատել են «բավարար»:

Զարթոնքը, հանդիսանալով ՀԱԷԿ-ին ազդակիր համայնք, այնուամենայնիվ, չի ստանում սոցիալական աջակցություն ՀԱԷԿ-ից: Անգամ ջեռուցումը բնակիչներն ապահովում են հիմնականում փայտով ու աթարով: Վառելափայտի 1 խմ-ը գնում են 20.000-25.000 դրամով: Ձմռանը օգտագործում են 7-10 խմ վառելափայտ:

2.11. գ.Հովտամեջ

Գյուղը գտնվում է ՀԱԷԿ-ից 9 կմ, մարզկենտրոնից 19 կմ հեռավորության վրա: Հովտամեջը տեղակայված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 880 մ բարձրություն: Գյուղն ունի 272 առկա տնտեսություն, դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Ընդհանուր տարածքը կազմում է 270 հա, բնակելի տարածքը՝ 56 հա: Տվյալ համայնքից ՀԱԷԿ-ում աշխատողներ չկան:

Նկ.10 գ. Հովտամեջ

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ, մշակում են բանջարաբոստային կուլտուրաներ, զբաղվում են անասնապահությամբ՝ չնայած արոտավայրեր չունեն։

Ջեռուցման նպատակով օգտագործենում փայտ, բնական գազ։ Կենցաղում օգտագործվող էլեկտրաէներգիայի դիմաց ամսական վարձավճարը կազմում է 5,0-10,0 հազար դրամ։ բնակարանների ջեռուցման նպատակով օգտագործվող վառելափայտի դիմաց տարեկան ծախսը կազմում է 150,0-300,0 հազար դրամ։

Ապաստարաններ չունեն, նախատեսված են նկուղները։ Միջուկային վտանգի դեպքում բնակչության տարահանման պլանն առկա է համայնքապետարանում, սակայն բնակչության համար դրանք ցուցադրված և տեսանելի չեն։ Ամբուլատորիայում յոդի հաբեր չկան, հակագազերով, կամ շնչադիմակներով ապահովված չեն։ Անվտանգության ազդարարման համակարգը միացված չէ ՀԱԷԿ-ին։ Համայնքում վերջին անգամ անվտանգության ուսումնավարժական պարապմունքներ անց են կացվել 12.05.2017թ՝ համայնքապետարանի աշխատակիցների, բուժքույրերի, վարորդների, խոշոր ֆերմերների, դպրոցի ռազմագիտության ուսուցչի մասնակցությամբ։

Ըստ հարցվածների՝ ՀԱԷԿ-ին վերաբերող իրավական ակտերի քննարկմանը չեն մասնակցել երբևէ, անմասն են ոլորտում որոշումների կայացմանը։ Երբևէ ռադիակտիվ ֆոնի չափումներ չեն կատարվել։ Երեմն կատարվել են հողի, ջրի անալիզներ, սակայն արդյունքների մասին չեն հայտնել։

Ունեն 800մ երկարությամբ խմելու ջրի ասբեստի խողովակ, սակայն այն փոխելու ֆինանսական միջոցներ չունեն, իսկ «Վեոլիա ջուր»-ը հրաժարվում է այն փոխել իր միջոցների հաշվին։ Համայնքն ամեն տարի ներկայացնում է անվտանգության միջոցների ձեռքբերման հայտը։ Բնակիչները տեղեկացված չեն ատոմակայանի ռիսկերից, չեն տիրապետում ռադիացիոն անվտանգության հետ կապված ինֆորմացիայի, չգիտեն, թե եթե լինեն արտակարգ իրավիճակներ, ինչ հետևանքներ են կրելու։ «Մեր նկուղներն ապաստարաններ չեն. դուռ, լուսամուտ, սաղ բաց է, պաշտպանական ոչինչ չկա՝ ոչ հակագազ, ոչ յոդ, ոչ մի բան, ես մարդկանց ո՞նց տանեմ, ո՞նց պահեմ։ Սրանք հարցեր են, որոնց պատասխանները ռեալ ոչ ոք չգիտի, իրավիճակը, հետևանքները ոչ ոք չի պատկերացնում՝ սկսած ինձանից։ Այո, մարդիկ չեն պատկերացնում՝ դա ինչ է, գիտենք, որ ո՛չ ջուր է, ո՛չ քամի, ո՛չ փոշի։ Մենք կուզենայինք իմանալ՝ ինչը ցանենք, ինչը պետք չէ, թող հողի, ջրի անալիզներ արվեն։ Մենք ռիսկ չենք անում ինքներս տանենք, անալիզ անել տանք, մեզանից են փող ուզելու, թիվ են կրակելու», - հանդիպման ժամանակ նշեց Հովտամեջի համայնքապետը։

2.12. ք.Արմավիր

Արմավիր քաղաքը ՀՀ Արմավիրի մարզի վարչական կենտրոնն է։ ՀԱԷԿ-ից գտնվում է 10 կմ հեռավորության վրա։ Տեղակայված է Արարատյան դաշտում՝ ծովի

մակարդակից 860մ բարձրության վրա: Երևանից գտնվում է 48,0 կմ հեռավորության վրա: Քաղաքն ունի զարգացած արդյունաբերություն: Համայնքի մակերեսը 2181,99 հա է: Բնակչության թիվը՝ 37059 մարդ (հայեր, ռուսներ, քրդեր, եզդիներ, ասորիներ): Տնային տնտեսությունների թիվը՝ 8000: Բնակչության հիմնական զբաղմունքն է՝ սպասարկում, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, տրանսպորտ և կապ: Համայնքի 90%-ը գազաֆիկացված է, առանձին թաղամասեր ունեն խմելու ջրի խնդիր: Ունի նախադպրոցական, միջնակարգ, միջին մասնագիտական հաստատություններ, սպորտ դպրոց, մշակույթի տուն, հիվանդանոց: Արդյունաբերության մեջ հատկապես մեծ տեսակարար կշիռ ունեն ագրոարդյունաբերական համալիր ձեռնարկությունները: Կան մի շարք պահածոների, գինու, կոնյակի գործարաններ: Ունի խորդենու վերամշակման գործարան, 1966 թ-ից գործում է կոնյակի գործարանը: Արտադրվում են Վերմուտ տեսակի գինիներ: Ունի նաև կարի արտադրամաս: Ծանր արդյունաբերությունից զարգացած է շինանյութերի արտադրությունը:

Հողային ֆոնդի մոտ 75%-ն օգտագործվում է որպես համայնքի հող, որի կեսը տնամերձ հողերն են: 341,52 հա գյուղատնտեսական նշանակության հող չի մշակվում ոռոգման ջրի բացակայության պատճառով: Դրանք բանջարանոցներ և պտղատու, խաղողի այգիներ են: Զբաղվում են տեխնիկական մշակաբույս հանդիսացող խորդենու վերամշակմամբ, որից ստանում են եթերայուղեր:

Արմավիր համայնքում կա 2 ապաստարան՝ մանկապարտեզում և հիվանդանոցում: Որպես ապաստարաններ են ծառայում նկուղները, որոնք չունեն պաշտպանության անհրաժեշտ պայմաններ, համապատասխան կառուցվածք և այլն: Ըստ հարցվածների մեծ մասի՝ բնակչության տարահանման պլան և միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ համայնքում չկան: Որոշ բնակիչներ ընդհանրապես տեղյակ չեն այդ մասին: Միայն մեկ բնակիչ նշեց, որ բնակչության տարահանման պլան առկա է դպրոցներում: Անվտանգության ուսումնավարժական պարապմունքներ, ըստ արմավիրցիների, իրականացվում են դպրոցներում: Դպրոցի հետ առնչություն չունեցող բնակիչները տեղյակ չէին ուսումնավարժական պարապմունքների անցկացման մասին: Դրա հետ մեկտեղ հարցվածներն իրենց իրազեկվածության մակարդակը գնահատեցին «բավարար»: ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության վերաբերյալ իրավական ակտերի քննարկումներին հարցվածներից ոչ մեկ չի մասնակցել:

«Արմավիրի մարզում գյուղացիական տնտեսությունների 70 տոկոսից ավելին սոցիալական վատ վիճակում է գտնվում: Մեծամոր քաղաքը ստեղծվել է ատոմակայանի հենքի վրա: Նախկինում և՛ Մեծամորի, և՛ հարակից համայնքների բնակիչների համար սահմանված էին որոշակի արտոնություններ. 100 տոկոսով ատոմակայանը զիջում էր էլեկտրաէներգիայի վարձավճարները: Հետո դրանք վերանայվեցին, իջեցվեցին մինչև 70,

50 տոկոս, իսկ անկախությունից հետո վերացան բոլոր արտոնությունները» - այս մասին հայտնեց «Արմավիրի մամուլի ակումբ» ՀԿ-ի նախագահ Անժելա Ստեփանյանը:

Արմավիր համայնքում բնակիչների հիմնական զբաղմունքը այգեգործությունն է, բանջարանոցային կուլտուրաների մշակումը, անասնապահությունը: Կան ընտանիքներ, որոնք ապրում են արտագնա աշխատանքների հաշվին: Ոռոգման և խմելու ջուր կա, սակայն խմելու ջուրը վատ որակի է: Հարցվածների մեծ մասը նշեց, որ կոյուղաջրերի հեռացման կենտրոնացված համակարգ, մաքրման կայաններ չկան:

Ջեռուցման նպատակով Արմավիրում օգտագործում են էլեկտրաէներգիա, գազ, փայտ և բիովառելիք: Ծախսերը տարբեր են. էլեկտրաէներգիայի համար ձմռանն ամսական վճարում են մինչև 30.000 դրամ, գազի համար՝ 50.000-80.000 դրամ: Ատոմակայանին հարակից Արմավիրում կան ընտանիքներ, որոնք ձմռանը փայտով են ջեռուցվում:

ԳԼՈՒԽ 3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ՀԱԷԿ-ի ազդակիր գոտու համայնքների բնակիչների անվտանգությունն ապահովված չէ ճառագայթային վթարների դեպքում:
- Բնակիչների իմացությունը ճառագայթման և էկոլոգիական անվտանգությանը ներկայացվող պահանջներին մակերեսային է, հաճախ հակասական, նույնիսկ տրամագծորեն հակառակ անվտանգության պահանջներին:
- ՀՀ կառավարության ատոմային էներգետիկայի որդեգրած նոր քաղաքականության մասին տեղյակ չէին հարցվածների գերակշիռ մասը՝ 95%-ը:
- Չկա փոխհամագործակցություն ՀԱԷԿ-ի և ազդեցության գոտու համայնքների միջև: Հանրությունը ներգրավված չէ ՀԱԷԿ-ի ծրագրերի, կայանի հետագա վերազինման, ոլորտում որոշումների կայացման գործընթացներում, ՀԱԷԿ-ի ազդեցության գոտու ուսումնասիրված համայնքներում ոչ մի նմանատիպ քննարկում չի կայացել:
- ՀԱԷԿ-ը և կառավարությունը համայնքների համար սոցիալական ծրագրեր չունեն և նրանց չեն աջակցում:
- Տեղի բնակչությունը տեղեկատվություն չունի ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում օդի, ջրի, հողերի աղտոտվածության վերաբերյալ իրականացվող մոնիթորինգի, ինչպես նաև արտադրվող գյուղմթերքների որակական կազմի անալիզների կատարման, դրանց ընթացքի և վերջնական արդյունքների մասին: Եթե նույնիսկ կատարվում են անալիզներ, միևնույն է, բնակչությունը տեղեկացված չէ այդ մասին:
- Հնարավոր ճառագայթման վտանգի մասին բնակիչներն ունեն անբավարար իմացություն, դրան կանխարգելման և հակազդման համար բացակայում են համապատասխան միջոցները:

- Համայնքների բուժսպասարկման կետերում և բնակիչների շրջանում բացակայում են վահանաձև գեղձի արգելափակման համար նախատեսված կայուն յոդի պատրաստուկները:
- Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցներ՝ զտող հակագազեր, շնչադիմակներ չուներ հարցված բնակիչների 100%-ը:
- Ազգային պլանով նախատեսված ապաստարաններ, թաքստոցներ և այլ պաշտպանական կառույցներ համայնքներում չկան: Որպես ժամանակավոր թաքստոց նախատեսված նկուղները և սպորտդահլիճները չեն համապատասխանում ճառագայթային վտանգիներից պաշտպանվելու տարածքներին և շինություններին ներկայացվող տարրական պահանջներին: Համայնքներում չկան բնակչության տարահանումն ուղղորդող պաստառներ, տարահանման պլաններ, բացակայում են վտանգի ազդարարման շչակները:
- Էլեկտրաէներգիայի սակագները ՀԱԷԿ-ի ազդեցության գոտու բնակիչների համար նույնն են, ինչպես ՀՀ մյուս շրջանների բոլոր քաղաքացիների համար: Ազդակիր համայնքներում չի կիրառվում դոտացիայի մեխանիզմը: Ջեռուցման նպատակով տեղացիների 70% -ն օգտագործում է վառելափայտ, քանի որ, ըստ հարցվածների, բարձր են էլեկտրաէներգիայի և գազի սակագները:
- ՀԱԷԿ-ն ընդգրկված չէ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» օրենքով ամրագրված կազմակերպությունների ցանկում: Համայնքները չունեն «ազդակիր համայնք»-ի կարգավիճակ: Համայնքների բնակիչները օրենքով զրկված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար ՀԱԷԿ-ի վճարած բնապահպանական հարկերից մասնահանում ստանալու հնարավորությունից: Նրանք չեն կարող դատական կարգով վիճարկել նաև որևէ որոշում: